ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՈՒՄ՝ ԸՍՏ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագիրը՝ «Էջմիածինը», սկսած հիմնադրման պահից՝ 1944 թվականից, արժեքավոր հոդվածներ է հրապարակել Իրանի հայ համայնքի գործունեության վերաբերյալ։ Այդ հոդվածներն ունեն աղբյուրագիտական նշանակություն. դրանց միջոցով կարող ենք որոշակի պատկերացում կազմել Իրանի հայ գաղթօջախի՝ Մայր հայրենիքի հետ ունեցած կապվածության, ինչպես նաեւ հասարակական կյանքի վերաբերյալ։

ա. Տ. Գեւորգ արքեպս. Զորեքչյանի այցը Թեհրան, Հայոց կաթողիկոսի ընտրությունը.

Ամենայն Հայոց կաթողիկոսության եւ իրանական պետության միջեւ ձեւավորված հարաբերություններն ունեն դարերի պատմություն։ Հայտնի է, որ Հայոց անկախ պետականության բացակայության պայմաններում Հայ Եկեղեցին իրականացնում էր հայահավաք քաղաքականություն, փորձում լուծել նաեւ հայկական գաղթօջախների ազգային ու հոգեւոր խնդիրները։ Այս տեսանկյունից հիշարժան է 1944 թ. կաթողիկոսական տեղապահ Տ. Գեւորգ արքեպս. Զորեքչյանի գլխավորած պատվիրակության այցը Թեհրան եւ կաթողիկոսական ընտրությունների կազմակերպման ու անցկացման վերաբերյալ քննարկումները համայնքի հետ[1]։

Ինչպես աշխարհասփյուռ, այնպես եւ Իրանի հայությունը ցնծությամբ ընդունեց հայրապետական ընտրության լուրը։ Հիրավի, այն հայրենիքի գաղափարի հետ նույնացվող երեւույթ էր համայնքում։ Այդ մասին «Ալիք» թերթը գրել է. «...խուռներամ մի բազմութիւն լցրել էր Թեհրանի հայ ակումբի սրահն ու ներքանցքը»[2]։ *Նույն առիթով ամսագրի*

---

[1] *Պատվիրակությունն այցելություններ էր նախատեսել նաեւ Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ։ Ուստի այդ շարակարգում էին իրանահայոց հետ հանդիպումները։*

[2] *«Ալիք» օրաթերթ, թ. 98, 1944. տե՛ս նաեւ «Ամենայն Հայոց Հայրապետության Տ. Տեղակալի պատվիրակությունը Իրանի մայրաքաղաքում», «Էջմիածին», 1944, Զ., էջ 24։*

խմբագրակազմը գրում է. «Հայ եկեղեցին միշտ էլ խուսափել է քաղաքականութիւնից, երբ այդ հնարաւոր է եղել: Նա քաղաքականութեամբ զբաղուել է ակամայ՝ պաշտպանելու համար իր ժողովրդի շահը, նրա մշակոյթը, ազգային աւանդութիւններն ու սրբութիւնները ...»[3]:

Ահա թե ինչ է գրում Իրանում հրատարակվող «Վերածնունդ» թերթը. «Ամբողջ հայութիւնը ցնծագին ողջունում է այն երջանկաւէտ լուրը, որ արել է ազգընտիր տեղակալը *(կաթողիկոսական տեղապահ Տ. Գեւորգ արքեպս. Զորեքչյան.*— Կ. Մ.*)* աշխարհի չորս անկիւններում ցրուած հայութեան: Դա տեղի ունենալիք կաթողիկոսական ընտրութեան կենսատու աւետիսն է...»[4]:

1945 թ. հունիսի 16—22-ը Ս. Էջմիածնում տեղի ունեցավ համազգային եկեղեցական ժողով, որը եւ հունիսի 22-ին Գեւորգ արքեպս. Զորեքչյանին միաձայն ընտրեց Ամենայն Հայոց Կաթողիկոս[5]*: Նորընտիր հայրապետին շնորհավորում են Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տ. Ներսես արքեպս. Մելիք-Թանգյանը, Սպահանի եկեղեցական խորհուրդ*[6]*: Համազգային եկեղեցական ժողովի մասնակից, Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Վահան ծ. վրդ. Կոստանյանն իր խոսքում ընդգծում է.* «...Թեհրանի հայությունն անվերապահորեն կապված է Մայր հայրենիքի, Սուրբ Էջմիածնի եւ նրա սրբությունների հետ»[7]:

Հիշարժան է, որ համազգային եկեղեցական ժողովին Իրանի հայոց թեմերի ներկայացուցիչներն էին՝ Բագրատ Ավագյանը Թեհրանից, Լեւոն Տեր-Հովհաննիսյանը Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմից, Բաբկեն Օլուքչյանը, Կարապետ ավ. քհն. Մանուկյանը Ատրպատականի թեմից:

Վերոնշյալ ժողովում ընթացքում Տ. Վահան ծ. վրդ. Կոստանյանը հայտարարում է, որ իր թեմը հանձն է առնում չորս ուսանողի թոշակ տրամադրել, բացի այդ՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի պահպանման

---

[3] *«Ամենայն Հայոց Հայրապետության Տ. Տեղակալի պատվիրակությունը Իրանի մայրաքաղաքում», «Էջմիածին», 1944, Զ., էջ 24:*

[4] *«Վերածնունդ» թերթ, Թեհրան, թ. 50, մարտ, 1945. տե՛ս նաեւ «Հայրապետական ընտրության շուրջը», «Էջմիածին», 1945, Գ.—Դ., էջ 6:*

[5] *Տե՛ս «1945 թ. հունիսի 16-ի Համազգային եկեղեցական ժողովի պատգամավորների անվանացուցակը», «Էջմիածին», 1945, Զ.—Է., էջ 63—65. նաեւ՝ «Սովետական Հայաստան» օրաթերթ, 24 հունիսի 1945 թ., թ. 126 (7379):*

[6] *Տե՛ս «Թավրիզից Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Գեւորգ Զ.-ին» եւ «Իսպահանի եկեղեցական խորհրդից» «Էջմիածին», 1945, Զ.—Է., էջ 18:*

[7] *Անդ, էջ 24—25:*

համար հանգանակել էր 17 000 թուման եւ հանձն էր առնում եւս 20 000-ը նվիրաբերել[8]*։*

Անկասկած, իրանահայ պատվիրակների մասնակցությունը հնամենի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարված ժողովին հայրենիքի նվիրական գաղափարի կենսունակության դրսեւորման առիթ էր։ Հունիսի 25-ին՝ Ազգային-եկեղեցական ժողովի վերջին նիստին ելույթ է ունենում Գեւորգ Զ. Զորեքչյանն ու ընդգծում. «Ուրախությամբ հայտարարում եմ ի գիտություն ժողովի, որ մեր շարքերում է գտնվում ազգային բարեգործ Իրանա-Հնդկաստանի թեմից պ. Ռոման Բոգդանի Իսաեւը, որը Թեհրանում 600 000 թուման ծախսելով՝ կառուցել է մի եկեղեցի. նա նվիրել է Կարմիր բանակին 250 000 թուման, Բաղրամյանի անվան տանկային շարասյան օգտին նվիրել է 500 000 թուման»[9]*։*

Իրանահայ համայնքը մասնակցում էր Մայր Աթոռում եւ նրա գահակալի շուրջ տեղի ունեցող հիշարժան իրադարձություններին։ 1948 թ. սեպտեմբերի 26-ին «Վերածնունդ» թերթը հատուկ հրապարակմամբ անդրադառնում է Հայոց կաթողիկոսի անվանակոչության տոնին. «Թե՛ Մայր հայրենիքի եւ թե՛ Սփյուռքի հավատացյալ, ազգասեր ու գիտակից հայությունը հավատքով ու համոզումով սերտորեն կապված է Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռին, վերածնվող Սովետական Հայաստանին, իր խոհուն ու ազգասեր Շինարար կաթողիկոս Գեւորգ Զ.-ին...»[10]*։*

բ. Իրանահայության աջակցությունը խորհրդային Հայաստանին երկրորդ աշխարհամարտի տարիներին.

Երկրորդ աշխարհամարտի տարիներին իրանահայությունը զգալի աջակցություն ցուցաբերեց հայրենիքին։ Այդ է վկայում ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Ի. Ստալինի՝ 1944 թ. հունիսի 6-ով թվագրված պատասխան հեռագիրը կաթողիկոսական տեղապահ Գեւորգ արքեպս. Զորեքչյանին, որտեղ ԽՍՀՄ առաջնորդը խնդրում էր իր ողջույնը եւ Կարմիր բանակի շնորհակալությունը փոխանցել արտասահմանի հայերին[11]*։ Տեղին է նշել, որ այս գրությանը նախորդել էր Գեւորգ արքեպս. Զորեքչյանի նամակն Ի. Ստալինին, ըստ որի՝ Թեհրանի հայությունը «Սասուն-*

---

[8] *Տե՛ս անդ, էջ 33։*

[9] *Անդ, էջ 41։*

[10] *Տե՛ս «Գաղութահայ կյանք. Արձագանքներ», «Էջմիածին», 1949, Ա.—Բ., էջ 93։*

[11] *Տե՛ս «ՍՍՌՄ ժողկոմսովետի նախագահ Սովետական Միության մարշալ Ի. Վ. Ստալինի պատասխան հեռագիրը Ամենայն Հայոց հայրապետության ազգընտիր տեղակալ Ամենապատիվ Տ. Գեւորգ արքեպիսկոպոսին», «Էջմիածին», 1944, Զ., էջ 10։*

ցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման համար տրամադրել էր 1 745 000 իրանական ռիալ[12]։

Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպս. Մելիք-Թանգյանն առաջիններից էր, որ արձագանքելով Գեւորգ արքեպս. Զորեքչյանի հայրենասիրական կոչերին՝ նշված տանկային շարասյան ստեղծման համար նախաձեռնեց հանգանակություն։ Նա իր հավաքած միջոցների մասին հեռագրեց Ի. Ստալինին եւ ստացավ նրա շնորհակալությունը[13]։ Ավելին՝ 1945 թ. հունվար-փետրվար ամիսներին Մելիք-Թանգյանի նախագահությամբ Ատրպատականի թեմում կազմակերպվեց հանգանակություն բանակի հրամանատար, ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Բաղրամյանի անվան տանկային շարասյան ստեղծման համար[14]։ Ներսես սրբազանի ղեկավարությամբ թեմում միջոցներ էին հավաքվում՝ զոհված զինվորականների երեխաների աջակցության, Ստալինգրադի վերակառուցման եւ հայրենասիրական այլ նպատակների իրագործման համար։

1948 թ. սեպտեմբերի 29-ին ստանալով Ներսես արքեպս. Մելիք-Թանգյանի մահվան գույժը[15]՝ Վեհափառը Հայրապետը հեռագրում է. «Մենք եւ միաբանությունը *(Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.– Կ. Մ.)* խորապես վշտացած ենք Սուրբ Էջմիածնի հարազատ ու հավատարիմ զավակի, ժողովրդասեր, գործունյա, հեղինակավոր եւ դժվար փոխարինելի միաբանի մահվան առթիվ»[16]։

Հայրենիքի եւ հայրենադարձության գաղափարախոս Տ. Ներսես արքեպս. Մելիք-Թանգյանը Հայ Եկեղեցու նշանավոր հոգեւորականներից էր, որը 36 տարի անընդմեջ ընտրվել է թեմի առաջնորդ։ Հիշարժան է, որ «Ժուռնալ դը Թեհրան» *պարբերականը Ներսես սրբազանի մասին գրել է.* «Իր գործունեության երկարաշունչ ասպարեզում Ատրպատականի առաջնորդը միշտ աշխատել է ամրապնդել հայերի եւ մահմեդականների բարեկամությունը եւ ձեռք էր բերել մահմեդականների բարեկամությունը»[17]։

---

[12] *Տե՛ս «Ամենայն Հայոց հայրապետության Տ. Տեղակալի հեռագիրը Ի. Վ. Ստալինին», «Էջմիածին», 1944, Զ., էջ 9։*

[13] *Տե՛ս «Գերապատիվ Տ. Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան», «Էջմիածին», 1945, Ա.-Բ., էջ 8։*

[14] *Տե՛ս անդ, էջ 9։*

[15] *Տե՛ս «Մայր Աթոռ», «Էջմիածին», 1948, Ժ.–ԺԲ., էջ 21։*

[16] *Անդ, էջ 21։*

[17] *Տե՛ս «Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան», «Էջմիածին», 1948, Ժ.–ԺԲ., էջ 25։*

Ներսես սրբազանը նաեւ որպես աստվածաբան ունի իր արժանի տեղը Հայ Եկեղեցու անդաստանում. չափազանց արժեքավոր է նրա «Հայոց եկեղեցական իրաւունքը» երկհատոր աշխատությունը[18]*։*

գ. Իրանահայության հայրենադարձությունը «էջմիածին» ամսագրի հրապարակումներում.

Հայրենիքի գաղափարի գործնական արտահայտությունն իրանահայերի կազմակերպված հայրենադարձությունն էր Խորհրդային Հայաստան։ Հիրավի, Իրանի հայ գաղթօջախում հայրենապաշտությունը դարեր շարունակ եղել է կենսունակ՝ առաջին հերթին ու գլխավորապես ազգային Եկեղեցու եւ նրա հովանու ներքո գործող դպրոցների գոյության շնորհիվ։ Հենց այդ առաքելությամբ 1946 թ. հունիսի 16-ին Մայր Աթոռից Իրան է մեկնում Թեհրանի թեմի նոր կարգված առաջնորդ Տ. Ռուբեն եպս. Դրամբյանը[19]*։*

Տ. Ռուբեն սրբազանի գործունեության վերաբերյալ գնահատականը տրված է «էջմիածին» ամսագրում. «...նա պաշտպանում էր «հոգով եւ ճշմարտութեամբ» Ս. էջմիածինը եւ մինչեւ իր կյանքի վերջին շունչը կապված է եղել Ս. էջմիածնի գաղափարին»[20]*։ Հիրավի, Ռուբեն արքեպս. Դրամբյանի մահը մեծ կորուստ էր իրանահայ համայնքի համար։ Հայոց հայրապետին ցավակցում էին Թեհրանի հայոց թեմական խորհուրդն ու եկեղեցական վարչությունը, համայնքային գործիչ Ռոման Իսաեւը, ինչպես նաեւ մյուս թեմերի կառույցները եւ առաջնորդները*[21]*։*

Ռուբեն սրբազանի նախաձեռնությամբ Թեհրանի թեմից մեծ թվով հայեր վերադարձան հայրենիք։ «էջմիածին» ամսագրում հետաքրքիր տեղեկություններ են առկա իրանահայ հայրենադարձների մասին[22]*։ Այստեղից պարզ է դառնում, որ* «...մինչեռ Հայաստան էր ժամանում հյուսիսից երկրորդ խումբը, ներգաղթողների առաջ բացվեցին նաեւ հարավային դռները։ Հուլիսի 17-ին հատուկ գնացքով Ջուլֆա ժամանեց իրանահայերի

---

[18] *Տե՛ս* Է. Յակոբեան, *Ներսէս արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանի վերջին կտակը, «Իրանամէջ» ամսագիր, Երեւան, 1999, թ. 32, էջ 105։*

[19] *Տե՛ս «Հայոց Եկեղեցի. Մայր Աթոռ», «էջմիածին», 1946, Զ.-Է., էջ 27։*

[20] *«Գեր. Ռուբեն արքեպիսկոպոսի մահը եւ հուղարկավորությունը», «էջմիածին», 1952, Բ., էջ 17։*

[21] *Տե՛ս «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ողբում է մահը Մայր Աթոռ Ս. էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանի», «էջմիածին», 1952, Բ., էջ 8—11։*

[22] *Տե՛ս «Իրանահայերի ժամանումը», «էջմիածին», 1946, Զ.-Է., էջ 70։*

առաջին խումբը՝ թվով 440 մարդ»[23]։ *Արժանահիշատակ է՝ հայրենադարձների դիմավորման արարողություններին մասնակցում էին նաեւ Խորհրդային Հայաստանի պետական-կուսակցական գործիչները, ինչը փաստում է, որ հայրենադարձությունն իրականացվում էր պետության հոգածության ներքո։*

Հուլիսի 19-ը պատմական էր իրանահայ հայրենադարձների համար, քանի որ հենց այդ օրը նրանց առաջին խումբը ժամանում է Արտաշատ։ Ամսագրի մեկ այլ հրապարակման մեջ նշվում է. «Օրերս Միկոյան[24] ժամանեց Իրանից ներգաղթած հայերի մի մեծ խումբ՝ բաղկացած 500 մարդուց»[25]։

Եւս մեկ կարեւոր հանգամանք. հայրենադարձության միջոցով համալրվում էր նաեւ Հայոց Եկեղեցու հոգեւոր սպասավորների թիվը, որն անհրաժեշտ էր իշխող գաղափարախոսություն հռչակված անաստվածության (աթեիզմի) պայմաններում։ Այդ մասին հրապարակումներից մեկում նշվում է, որ Իրանից ներգաղթած Տ. Վաղարշակ քհն. Բաղումյանը ԳՀԽ-ի կողմից կարգվել է Թալինի շրջանի Ղրմզլու[26] գյուղի ծխատեր քահանա[27]։

Ըստ պատմաբան Ն. Սարգսյանի՝ մեծ հայրենադարձությունը սկսվեց 1946 թ. հուլիսի 27-ին, երբ «Տրանսիլվանիա» նավով Բեյրութից Բաթում եկան բազմաթիվ սիրիահայեր ու լիբանանահայեր (ընդհանուր թվով՝ 1816)։ Այնուհետեւ միայն Իրանից հայրենիք է վերադառնում 3870 ընտանիք (20 597 մարդ)[28]։

Հայրենադարձների հաշվեկշռում իրանահայերը եղել են առաջին տեղում, երբ դիտարկում ենք տարբեր երկրներից ներգաղթած հայերի թվակազմը. Սիրիայից, Լիբանանից միասին վերցրած գաղթել է 3794 ընտանիք (19 253 մարդ), Բուլղարիայից՝ 1248 ընտանիք (4383 մարդ), Հունաստանից՝ 1372 ընտանիք (4974 մարդ), Ռումինիայից՝ 517 ընտանիք (1738 մարդ)։

---

[23] *Անդ, էջ 70։*

[24] *1935–1957 թթ. Եղեգնաձորի շրջանը կոչվել է Միկոյանի շրջան։*

[25] *«Ներգաղթող հայերի նոր խումբ», «Էջմիածին», 1946, Ը.-Ժ., էջ 88։*

[26] *Կարմրաշեն՝ գյուղ ՀՍՍՀ Թալինի շրջանում՝ հյուսիսարեւելյան կողմում։ Կարմրաշեն է վերանվանվել 12.11.1946 թ. հրամանագրով։ Գյուղը գտնվում է Արագածի սարալանջին՝ քարքարոտ վայրում։*

[27] *Տե՛ս «Խմբագրական, Հայոց Եկեղեցի, Մայր Աթոռ», «Էջմիածին», 1948, Գ.-Դ., էջ 13։*

[28] *Տե՛ս* Ն. Սարգսյան, *ՀԿԿ գործունեությունը սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման եւ նրանց սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղղությամբ (1946–1948), էջ 14։*

Խիստ կարեւոր է այն իրողությունը, որ իրանահայերի հայրենադարձությունն Իրանում կազմակերպում էր այս պետության կողմից իրավականորեն ճանաչված եւ կարգավիճակ ունեցող Հայոց Եկեղեցին։ Սա, թերեւս, հարցի ամենակարեւոր կողմն է, որին խորհրդահայ պատմագիտական միտքը սակավ է անդրադարձել։

Մեծ թվով իրանահայերի արտագաղթը Խորհրդային Հայաստան չէր կարող աննկատ մնալ Իրանի կառավարության աչքից, որը 1947 թ. արգելեց դա։ Սա է պատճառը, որ հայրենադարձների թիվը կրճատվեց։ Տեղին է նշել, որ Իրանում սկսվել էր կառավարական ճգնաժամ։ Հաքիմիի կառավարությունը հրաժարական տվեց, եւ 1946 թ. հունվարի 27-ին վարչապետի պաշտոնը զբաղեցրեց քաղաքական մեծ փորձ ունեցող Ահմեդ Ղավամ էս-Սալթանեն[29]։ Վերջինս գիտակցում էր, որ երկրից իրանահայերի արտագաղթը կհանգեցնի հմուտ մասնագետների պակասի։ Ահա թե ինչու նշված որոշմամբ կանխվում էր նաեւ երկրում կոմունիստական գաղափարախոսության տարածումը։ Ուստի դրանով էր պայմանավորված պետության միջամտությունը Իրանում հայ համայնքի պահպանման ուղղությամբ։

Ավելին՝ հայրենադարձության նկատմամբ իրանական կառավարության բացասական վերաբերմունքը դառնում էր ակնհայտ հասարակական կյանքում։ 1948 թ. հուլիսի 4-ին «ՏԱՍՍ» լրատվական գործակալությունն անդրադարձել է նշված խնդրին մի հոդվածով, որն արտատպված է «Էջմիածին» ամսագրում[30]։ Հրապարակման մեջ ահազանգ էր հնչեցվում, որ «Թավրիզ ժամանող անձինք պատմում են այն կատաղի հալածանքների մասին, որոնց ենթարկվում են հայերը Իրանական Ադրբեջանում»[31]։ Իշխանությունները Թավրիզում փակել էին հայկական դպրոցները եւ ապօրինի գրավել դրանք։

Այս շարակարգում արժե նշել, որ լուրջ խնդիրներ էին առաջացել Իրանի հայոց թեմերում։ Հայրենադարձ մտավորական Լ. Աճեմյանը նկարագրելով Մայր Աթոռում տեղի ունեցած միջոցառումներից մեկը՝ նկատում է. «Աջ ու ձախ դասերու մեջ Էջմիածնի միաբաններն են կանգնած։ Անոնց մեջ են Իրանեն վերադարձած երկու առաջնորդներ։ Պարսից

[29] *Տե՛ս* Վ. Բաշբուխդյան, *Իրանի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը), Երեւան, 2005, էջ 644։*

[30] *Տե՛ս «Հայերի դեմ կիրառվող հալածանքները Իրանում», «Էջմիածին», 1948, է.–թ., էջ 102։*

[31] *Անդ, էջ 102։*

կառավարությունը արգիլած է անոնց առաջնորդական պաշտոն վարել Իրանի մեջ որպես օտարահպատակներ...»[32]։

Հարկ է նշել, որ խորհրդային քարոզչամեքենան, օգտվելով ստեղծված վիճակից, առավել դժնդակ էր ներկայացնում այդ երկրում ապրող հայերի վիճակը, որպեսզի ներգաղթածները հանկարծ չմտափոխվեն։

դ. Թեմական կյանքը «Էջմիածին» ամսագրի հրապարակումներում.

1945 թ. հունվարին կաթողիկոսական տեղապահ Գեւորգ արքեպս. Չորեքչյանը Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդ է նշանակում Տ. Վահան ծ. վրդ. Կոստանյանին։ Վերջինս նույն ամսի 25-ին մեկնում է իր թեմ[33], իսկ փետրվարի 15-ին Թեհրանի Ս. Աստվածածին եկեղեցում փոխանցում է Գեւորգ արքեպս. Չորեքչյանի օրհնությունը տեղի հայությանը[34]։

1945 թ. փետրվարի 19-ին Վահան ծ. վրդ. Կոստանյանը «Մարմարի» պալատում հանդիպում է արքունական նախարար Ալաիսին։ Վերջինս թեմական առաջնորդին ներկայացնում է Իրանի Մոհամմադ Ռեզա Փահլավի (1941—1979 թթ.) շահին. «Շահնշահը խիստ հարգալից եւ սիրալիր ընդունելության արժանացրեց առաջնորդ հորը, որը հանձնեց նրան Ամենայն Հայոց հայրապետության ազգընտիր տեղակալի կոնդակը՝ պարսկերեն թարգմանության հետ միասին»[35]։ *Թարգմանությունը կատարել էր հայազգի գործիչ Յուսուֆ խան Ղարախանյանը։ Կոնդակից պարզ է դառնում, որ Գեւորգ արքեպս. Չորեքչյանը երկու կարեւորագույն խնդիր էր բարձրացնում։ Դրանք էին՝* «1. Բարեհաճել կարգադրել, որպեսզի Իրանի պետության մեջ գտնվող հայոց դպրոցների ամեն մի դասարանին հայոց լեզվի, գրականության, պատմության եւ կրոնի դասավանդման համար հատկացվի շաբաթական 10—12 ժամ։ Չնայած այս մասին ժամանակին կարգադրություն եղել է, սակայն կյանքի մեջ շատ տեղերում կիրառված չէ։ 2. Վերադարձվեն հայոց դպրոցական շենքերն ու կալվածները»[36]։

---

[32] *Տե՛ս «Անմոռանալի պահեր Հայոց հայրապետանոցին մեջ», «Էջմիածին», 1950, Ա.-Բ., էջ 23—26։*

[33] *Տե՛ս «Խմբագրակազմ, Հայոց Եկեղեցի, Մայր Աթոռ», «Էջմիածին», 1945, Ա.—Բ., էջ 6—7։*

[34] *Տե՛ս «Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդ Բարձրապատիվ Տ. Վահան ծայրագույն վարդապետը Իրանում», «Էջմիածին», 1945, Գ.—Դ., էջ 7—9։*

[35] *«Իրանա-Հնդկաստանի առաջնորդ Բարձրապատիվ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Կոստանյանը Իրանի շահի մոտ», «Էջմիածին», 1945, Գ.—Դ., էջ 10։*

[36] *Անդ, էջ 10։*

Շահը, ծանոթանալով կոնդակի բովանդակությանը, թեմական առաջնորդին հանձնարարում է հայ գաղթօջախի խնդիրները գրավոր ներկայացնել արքունական նախարարին՝ խոստանալով համապատասխան կարգադրություններ անել։ Փաստորեն՝ խնդիրները լուծելու հնարավորություն է ստեղծվում։

Գեւորգ արքեպս. Չորեքչյանի մտահոգությունը դպրոցների առնչությամբ ամենեւին պատահական չէր։ Դեռեւս 1936 թ. իրանական իշխանությունները փակել էին հայկական դպրոցները։ 1942–1943 թթ. վերսկսվեց ուսուցումը, սակայն այն իրականացվում էր պարսկերենով, իսկ հայոց լեզվի դասավանդումն արտոնվեց միայն հիմնական ծրագրից ու դասաժամերից դուրս։ Թավրիզի հայկական դպրոցները վերաբացվեցին շատ ավելի ուշ[37]*։*

Վերլուծելով «Էջմիածին» ամսագրում հրատարակված բազմաբովանդակ տեղեկությունները՝ կարող ենք եզրակացնել.

ա. Պատերազմական դրության մեջ գտնվող Խորհրդային Հայաստանին իրանահայության կողմից նյութական զգալի միջոցների տրամադրումը վկայում է այդ գաղթօջախի եւ հայրենիքի սերտ կապերի մասին։

բ. Ազգային-եկեղեցական ժողովի աշխատանքներին եւ կաթողիկոսական ընտրությանը մասնակցելը իրանահայությունն ընկալում էր որպես հայրենիքի գաղափարի գործնական արտահայտություն, իսկ Սուրբ Էջմիածինը՝ որպես հայրենիքի խորհրդանիշ։

գ. Այս գաղթօջախում հայրենիքի գաղափարի կենսունակ լինելու մասին է վկայում այն իրողությունը, որ հայրենադարձների շարքում նկատելի թիվ էին կազմում իրանահայերը։

դ. Իրանահայերի մշտական բնակության հաստատումը Խորհրդային Հայաստանի մի շարք շրջաններում, անշուշտ, ուներ ընկերային-տնտեսական, պատմական, ժողովրդագրական կարեւոր նշանակություն։

РЕЗЮМЕ

С момента своего создания в 1944 году религиоведческий и арменоведческий журнал «Эчмиадзин» опубликовал ценные статьи о деятельности

[37] *Տես* Կ. Դալլաքյան, *Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երեւան, 2004, էջ 199։*

армянской общины Ирана. На страницах журнала можно найти многочисленные публикации на разные темы. Среди них: визит делегации во главе с Местоблюститеем Католикоса Всех Армян архиепископом Геворгом Чорекчяном в Тегеран в 1944 году и встречи с армянской общиной Ирана, деятельность Армянской епархии Ирана, роль известных ирано-армянских деятелей в развитии связей между родиной и диаспоров, пожертвования иранских армян, направленные родине во время Второй мировой войны. Особое внимание уделяется вопросу организации репатриации и участия в ней иранских армян.

SUMMARY

Since its inception in 1944, “Etchmiadzin” religious and Armenological journal of the Mother See of Holy Etchmiadzin has published valuable articles on the activities of the Armenian community in Iran. On the pages of the magazine, there are many publications related to the presentation of such issues as: visit of the delegation of the Deputy Patriarch of All Armenians headed by Archbishop Gevork Chorekchyan to Tehran in 1944, and meetings with the Iranian-Armenian community; activities of the Armenian Diocese of Iran, including the role of prominent Iranian-Armenian figures in the context of Homeland-Diaspora ties, as well as donations of Iranian-Armenians to the homeland during World War II. Special attention is paid to the issue of organizing repatriation and the participation of Iranian Armenians in it.